# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.05.2016թ.

## Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 2016 թվականի մայիսի 19-ի բողոքով ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Լոկատոր» ՓԲԸ-ի 2016 թվականի մայիսի 19-ի բողոքով ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից կազմակերպված «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» (այսուհետ՝ Ընթացակարգ) ծածկագրով պարզեցված ընթացակարգի պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի կողմից վերոհիշյալ Ընթացակարգով պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելու մասին ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

**Բողոքը քննող հանձնաժողովի՝**

**Անդամներ՝** **Մարտիրոսյան Հարություն**

**Գիրգորյան Դիանա**